ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

03 հուլիսի 2026թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2026 թվականի մայիսի 27-ի № 206-Ա որոշումը և մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2026 թվականի հունիսի 10-ի № 274-Ա հրամանը՝ սույն թվականի հունիսի 15-ից մինչև 19-ը ներառյալ.

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի (իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբը) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Հարություն Ալեքսանյանի (աշխատանքային խմբի ղեկավար), տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ Մայրանուշ Գալստյանի, ֆինանսական վարչության պետ Համլետ Ստեփանյանի, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հրաչյա Վարդանյանի, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Գուրգեն Ավետիսյանի, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Արթուր Հակոբյանի, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Հարություն Խաչատրյանի, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ Շավարշ Արտաշյանի (աշխատանքային խմբի անդամներ) կողմից իրականացվեց իրավական հսկողություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 09-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 03-Ն հրամանով հաստատված իրավական հսկողության հարցաշարով, ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքում:

1. Իրավական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների, ինչպես նաև հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Իրավական հսկողության արդյունքների և հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունեմ՝ Արզնի համայնքի ղեկավար Ֆելիքս Միրզոն:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարին:

Աշխատանքային խումբ՝

ղեկավար՝ Հ. Ալեքսանյան

անդամներ՝ Հ. Ստեփանյան

Մ. Գալստյան

Հ. Վարդանյան

Գ. Ավետիսյան

Ա. Հակոբյան

Հ. Խաչատրյան

Շ. Արտաշյան

Արզնի համայնքի ղեկավար՝ Ֆ. Միրզոն

03.07.2026թ.